ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/04

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Բողոք բերող՝ «Տեխնոթերմ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/40» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, օդորակիչների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.01.2022թ.-ի թիվ 26/26-1/21687-2021 գրությամբ «Տեխնոթերմ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 28.12.2021թ.-ի թիվ 1/18-2/83978-2021 գրության հիման վրա, 04.01.2022թ.-ին «Տեխնոթերմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 04.01.2022թ.-ին:

05.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/04 համարի ծածկագիրը:

13.01.2022թ.-ին, 19.01.2022թ.-ին, 26.01.2022թ.-ին և 03.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.02.2022թ.-ին:

2. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 28.12.2021թ.-ի թիվ 1/18-2/83978-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/40 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Տեխնոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման 41-րդ կետի (այսուհետ՝ կարգի) 23.12.2021թ-ին կազմակերպությունը ծանուցվել է ներկայացնել հայտի շտկված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթերը շտկվել են, բայց չեն համապատասխանել հրավերի պահանջներին և կարգի 42-րդ կետի համաձայն հայտը մերժվել է:

Հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ «Տեխնոթերմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ձեզ եմ ներկայացնում ընթացակարգի փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/40» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Տեխնոթերմ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Տեխնոթերմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 05.01.2022թ.-ի գրությամբ դիմել է «Տեխնոթերմ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.01.2022թ.-ի թիվ 26/26-1/21687-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը 19.01.2022թ.-ին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու) eauction.armeps.am համակարգի միջոցով (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) հայտարարել է N2 ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/40 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ Աճուրդ): «ՏԵԽՆՈԹԵՐՄ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ի թիվս այլ չափաբաժինների նաև մասնակցել է Աճուրդի 2-րդ չաափաբաժնին: 2-րդ չափաբաժնի համար ներկայացրած տեխնիկական բնութագրում Պատվիրատուն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրել է անհամապատասխանություններ, որոնց վերաբերյալ ծանուցել է Ընկերությանը և առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել, սակայն Ընկերությանը ուղարկված ծանուցման մեջ հայտնաբերված անհամապատասխա-նությունները մանրամասն նկարագրված չէին, նկարագրված էին վերացական և անհասկանալի ձևով: Ընկերությունը փորձել է բավարարել Պատվիրատուի պահանջը և ծանուցումը ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում

Պատվիրատուին ուղարկել է ապրանքի նոր տեխնիկական բնութագիր, որով առաջարկելէ մատակարարել նոր սերնդի օդորակիչ, որն հրավերով սահմանվածից ավելի էներգաեֆեկտիվ է և անվտանգ շրջակա միջավայրի համար: Սակայն Պատվիրատուն շտկված հայտը գնահատել է անբավարար և առանց մանրամասն նկարագրելու հրավերի պահանջների նկատմամբ Ընկերության հայտում հանդիսացող անհամապատասխանությունը մերժել է այն, պատճառաբանելով, որ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով պահանջված տեխնիկական բնութագրին: Որից հետո Պատվիրատուն դիմել է « ֆինանսների նախարարությանը «Տեխնոթերմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

2.1. Ընկերությունը մասնակցել է Աճուրդի 2-րդ չափաբաժնին: Աճուրդի 23.12.2021 թ.-ի թիվ 2 արձանագրությաբ (այսուհետ՝ թիվ 2 Արձանագրություն) սկզբնապես հայտով ներկայացված տեխնիկական բնութագում Պատվիրատուն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրել է անհամապատասխանություններ, որոնց վերաբերյալ ծանուցել է Ընկերությանը և առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել: Հայտնաբերված անհամապատասխանությունները արձանագրության և ծանուցման մեջ մանրամասն նկարագրված չեն, նկարագրված են վերացական և անհասկանալի ձևով: Մասնավորապես, թիվ 2 արձանագրության մեջ անհամապատասխանությունները նկարագրված են հետևյալ կերպ՝ «2-րդ չա փա բաժն ի համար ներկայացված տեխնիկական բնութագիրը հրավերի պահանջներին չի համապատասխանում, (թվերը հայտով նշված ձևին չի համապատասխանում, ինչպես նաև չի համապատասխանում խլագենտը և դրսի բլոկի բաշը գերազանցում է հայտով նախատեսված տեխնիկական բաշից):

2.2. Ընկերությունը փորձել է բավարարել Պատվիրատուի պահանջը և հայտում տեղ գտած անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցումը ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ուղարկել է ապրանքի նոր տեխնիկական բնութագիր: Ընկերության ներկայացրած նոր տեխնիկական բնութագիրը և Հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը ներկայացված է թիվ 1 աղյուսակում:

թիվ 1 աղյուսակ

Ընկերության ներկայացրած նոր տեխնիկական բնութագիր	***Հրավերով սահմանված տեխնիկական բնութագիր***
12000 BTU	*12000 BTU*
սառեցման-տաքացման մակերեսը առնվազն 40 մ2	*սառեցման-տաքացման մակերեսը առնվազն 40 մ2*

առավելագույն սպառվող հզորությունը սառեցման ռեժիմում 3500վտ	առավելագույն սպառվող հզորությունը սառեցման ռեժիմում 3500-3550 վտ
առավելագույն սպառվող հզորությունը տաքացման ռեժիմում՝ 3660վտ	առավելագույն սպառվող հզորությունը տաքացման ռեժիմում՝ 3650-3690 վտ
էներգիայի ծախսը սառեցման ժամանակ՝ առավելագույն 1080վտ	էներգիայի ծախսը սառեցման ժամանակ՝ առավելագույն 1150 վտ
էներգախնայողության դասը A++	էներգախնայողության դասը A
էներգիայի ծախսը տաքացման ժամանակ	էներգիայի ծախսը տաքացման ժամանակ
առավելագույնը 1130վտ	առավելագույնը 1100 վտ
խլադագենտ R32	խլադագենտ R410A
ներսի բլոկի աղմուկի մակարդակը առավելագույնը 37դբ	ներսի բլոկի աղմուկի մակարդակը առավելագույնը 40 դբ
դրսի բլոկի աղմուկի մակարդակը առավելագունը 52դբ	դրսի բլոկի աղմուկի մակարդակը առավելագունը 55 դբ
էլեկտրասնուցման լարումը 220-240U750Hz	էլեկտրասնուցման լարումը 220-240U./50Hz
ներսի բլոկի քաշը՝ քաշը՝ 8.5 կգ	ներսի բլոկի քաշը՝ քաշը՝ 8-10 կգ
դրսի բլոկի քաշը նետտրո (առանց փաթեթավորման) 28 Կգ.	դրսի բլոկի քաշը՝ 25-28կգ
ներսի և դրսի բլոկների հիդրոմեկոաացման դասը IPX4	ներսի և դրսի բլոկների հիդրոմեկոաացման դասը IPX4

2.3. Ընկերության առաջարկած օդորակիչը ավելի էներգաարդյունավետ է և անվնաս շրջակա միջավայրի համար քան հրավերով սահմանվածը, քանի որ R410a խլագենտ գազի համեմատ R32 գազը, որով աշխատում է Ընկերության առաջարկած օդորակիչը, ավելի նոր սերնդի է, շրջակա միջավայրի համար ավելի անվնաս է և էներգաարդյունավետ: Բացի այդ, հրավերով սահմանված է, որ օդորակիչը պետք է ունենա էներգախնայողության A դաս, մինչդեռ Ընկերությունն առաջարկել է A++ էներգախնայողության դասի օդորակիչ:

2.4. Աճուրդի 27.12.2021 թ.-ի թիվ 3 արձանագրությաբ (այսուհետ՝ թիվ 3 Արձանագրություն) Պատվիրատուն շտկված հայտը գնահատել է անբավարար և առանց մանրամասն նկարագրելու հրավերի պահանջների նկատմամբ Ընկերության հայտում հանտնաբերված անհամապատասխանությունը մերժել է այն, պատճառաբանելով, որ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով պահանջված տեխնիկական բնութագրին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» « օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:»

«Գնումների մասին» ՀՀ, օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Վերոգրյալից հետևում է, որ գնման գործընթացի նպատակն է համարժեք հատուցմամբ ձեռքբերել պատվիրատուի պահանջմունքներին համապատասխանող ապարանք, այն է՝ ապրանք, որը իր որակական և տեխնիկական հատկանիշներով պիտանի է ծառայեցնելու պատվիրատուի լիազորությունների սահմաններում իրականացվող գործողություններին: Ընդ որում գնման գործընթացն անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ արդյուքնում ձեռք բերվի գնման առարկա որի գինը առաջարկվածներց ամենացածրն է իսկ տեխնիկական հատկանիշները համապատասխանում են կամ գերազանցում են հրավերով սահմանվածից: Ուստի այդպիսի գնման առարկա առաջարկվելու դեպքում անհրաժեշտ է գնման գործընթացը շարունակելու նպատակով ապրանքն առաջարկած մասնակցի հետ տվյալ գնման գործընթացի շրջանակներում կնքել գնման պայմանագիր:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, Ընկերությունը Աճուրդի 2-րդ չփաբաժնով առաջարկել է հրավերով սահմանված տեխնիկական հատկանիշները գերազանցող օդորակիչ, մասնավորապես՝ Ընկերության առաջարկած օդորակիչը ավելի էն երգա արդյունավետ է և անվնաս շրջակա միջավայրի համար քան հրավերով սահմանվածը, քանի որ R410a խլագենտ գազի համեմատ R32 գազը, որով աշխատում է Ընկերության առաջարկած օդորակիչը, ավելի նոր սերնդի է, շրջակա միջավայրի համար ավելի անվնաս է և էներգաարդյունավետ: Բացի այդ, հրավերով սահմանված է, որ օդորակիչը պետք է ունենա էներգախնայողության A դաս, մինչդեռ Ընկերությունն առաջարկել է A++ էներգախնայողության դասի օդորակիչ: Ուստի հրավերով

սահմանված տեխնիկական բնութագրի և Ընկերության առաջարկած ապրանքի տեխնիկական բնութագրի միջև եղած այս տարբերությունը պետք է մեկնաբանվի Ընկերության օգտին, քանի որ Ընկերությունը գործելով բարեխիղճ Աճուրդին առաջարկել է ավելի լավ հատկանիշներ ունեցող ապրանք, հետևաբար այդ հիմքով վերջինիս հայտը մերժելը և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց սկսելը խաթարում է Օրենքի բուն նպատակը:

Ըմկերության ներկայացրած տեխնիկական բնութագրում միակ պարամետրը որը կարող է մեկնաբանվել ոչ ի օգուտ Ընկերությանը, դա էներգիայի առավելագույն ծախսն է տաքացման ժամանակ, որն ի տարբերություն հրավերով սահմանվածից 30 վատտով ավելի է: Սակայն դրա հետ մեկտեղ Ընկերության առաջարկած օդորակչի էներգիայի առավելագույն ծախսը սառեցման ժամանկ 80 վատտով ավելի թիչ է թան սահմանված է հրավերով: Համադրելով հրավերի նկատմամբ այս երկու տարբերությունները կարող ենք ւիաստել, որ Ընկերութան առաջարկած օդորակիչը ավելի էներգախնայող է քան հրավերով սահմանվածը: Նշվածից դժվար թե հնարավոր է Ընկերությանը վերագրել գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ Ընկերությունը մրցույթին մասնակցելով գործել է անբարեխիղճ և առաջարկել է հրավերով սահմանված օդորակչից ավելի լավ օդորակիչ:

Վերոգրյալից կարող ենք փաստել, որ Ընկերությունը գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն խախտելու միտում չի ունեցել և մեր կարծիքով չի խախտել: Ուստի խնդրում ենք Ընկերությանը չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված խախտումը:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Տեխնոթերմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2022/04 ծածկագրով ընթացակարգը:

4. <u>ՍՑ-ԼՕ-2022/04 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից օդորակիչների ձեռքբերման նպատակով 10.12.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/40» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Տեխնոթերմ» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 23.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Տեխնոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ռուսերեն լեզվով անվանումը սխալ է լրացված, հրավերով նախատեսված է, որ Դիմում-հայտարարությունը լրացնելիս հայտով նշվում է, որ մասնակիցը կից ներկայացնում է իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը կամ հայտարարագիր համաձայն հավելված 1.2-ի: Հավելված 1.2 ներկայացված չէ կամ կայքէջի հղումը բացակայում է: 2-րդ չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագիրը հրավերի պահանջներին չի համապատասխանում (թվերը հայտով նշված ձևին չի համապատասխանում, ինչպես նաև չի համապատասխանում խլադագենտը և դրսի բլոկի քաշը գերազանցում է հայտով նախատեսված տեխնիկական քաշից):

iv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Տեխնոթերմ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

v. Հանձնաժողովի 27.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ «Տեխնոթերմ» ՍՊԸ-ի կողմից շտկված փաստաթղթերը չեն համապատասխանում «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/40» ծածկագրով հրավերի պահանջներին, մասնավորապես՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով պահանջվող տեխնիկական բնութագիրն, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը որոշել է վերջինիս կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.01.2022թ.-ի թիվ 26/26-1/21687-2021 գրությամբ «Տեխնոթերմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված

լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները…..:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

թ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Օդորակիչների ձեռքբերման նպատակով 10.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/40» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված 1-ի՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

ե) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան); Ընդ որում՝

- 1.2 հավելվածը ներկայացնում է այն մասնակիցը, որը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ կամ այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները:

- 1.3 հավելվածը ներկայացնում է այն մասնակիցը, որը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ է և հայտը ներկայացնելու օրվա դրությամբ սահմանված կարգով պետք է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված լիներ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները.

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է.

- դիմում հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չի լրացվում. Եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված հավելվածը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ

եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

Հրավերի 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար

մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.11-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.11-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապատասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Ըստ այդմ՝ Պատվիրատուն և Հանձնաժողովը, գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս, չպետք է վերջիններիս ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ծանուցման էությունը կայանում է և ուղղված է Մասնակցին որոշակի հանգամանքների վերաբերյալ իրազեկելուն, տեղեկատվություն տրամադրելուն և բովանդակության ամբողջությանը հասու դարձնելուն:

Բողոքներ քննող անձը, ամփոփելով վերոգրյալ դիրքորոշումը, եզրահանգում է նաև, որ թեև գործադիրը հստակ չի սահմանում, թե ծանուցումն ինչպիսի՞ բովանդակություն պետք է պարունակի, սակայն միանշանակ է այն, որ ծանուցումը պետք է լինի այնպիսին, որ հնարավորություն կտա իրապես պարզելու դրանում պարունակվող հանգամանքը (ները), և մասնակցի կողմից ծանուցման հետ ծանոթանալու իրական հնարավորություն ստեղծվի: Այսինքն՝ մասնակիցների համար ծանուցումն իրական հնարավորություն պետք է ապահովի տիրապետելու դրա բովանդակությանը: Ընդ որում, հարկ է նկատել, որ շտկման մասին ծանուցումը պետք է պարունակի նաև տվյալներ շտկման ենթակա փաստաթղթերի ներկայացման ձևի և կարգի վերաբերյալ (կոնտակտային տվյալներ, էլեկտրոնային փոստի հասցե, որին պետք է մասնակիցն ուղարկի շտկված փաստաթղթերը կամ ներկայացման եղանակը և այլն): Ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն ծանուցումը (արձանագրությունը) ստացած մասնակցին, ծանուցմամբ նշված բովանդակությանը ծանոթանալուց հետո, շտկել անհամապատասխանությունները և

ներկայացնել այն ձևով, ինչպես նշված է ծանուցմամբ կամ ներկայացված արձանագրությամբ:

Վերոնշյալ պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր միայն փաստել՝ ծանուցման նպատակի լիարժեք իրականացման հանգամանքի մասին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից օդորակիչների ձեռքբերման նպատակով 10.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/40» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Տեխնոթերմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ռուսերեն լեզվով անվանումը սխալ է լրացված, հրավերով նախատեսված է, որ դիմում-հայտարարությունը լրացնելիս հայտով նշվում է, որ մասնակիցը կից ներկայացնում է իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը կամ հայտարարագիր համաձայն հավելված 1.2-ի: Հավելված 1.2 ներկայացված չէ կամ կայքէջի հղումը բացակայում է: 2-րդ չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագիրը հրավերի պահանջներին չի համապատասխանում (թվերը հայտով նշված ձևին չի համապատասխանում, ինչպես նաև չի համապատասխանում խլադագենտը և դրսի բլոկի քաշը գերազանցում է հայտով նախատեսված տեխնիկական քաշից), ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Տեխնոթերմ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովի 27.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Տեխնոթերմ» ՍՊԸ-ի կողմից շտկված փաստաթղթերը չեն համապատասխանում «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/40» ծածկագրով հրավերի պահանջներին, մասնավորապես՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով պահանջվող տեխնիկական բնութագիրն, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը որոշել է վերջինիս կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և հայտը մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի դիրքորոշմամբ ներկայացրած հանգամանքներին, ուսումնասիրելով Հանձնաժողովի 23.12.2021թ.-ի նիստի թիվ 2 և 27.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրություններով արձանագրված անհամապատասխանություններն, ինչպես նաև Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը՝ Բողոքներ քննող անձը

փաստում է, որ սույն դեպքում, Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանություններն անհասկանալի են, հստակ չեն ու չեն ելնում Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների պահանջներից, որպիսի պայմաններում Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ շտկման մասին ուղարկված ծանուցմամբ (արձանագրությամբ) հայտնաբերված անհամապատասխանությունների անհստակությունն ու վերացական լինելն օբյեկտիվորեն զրկել է Մասնակցին անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու, հայտով ներկայացված փաստաթղթերը հրավերի պահանջներին համապատասխանեցնելու և արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորությունից: Հանձնաժողովը մանրամասն չի նկարագրել հայտնաբերված անհամապատասխանությունները, որպիսի հանգամանքը հանգեցրել է Կարգի 41-րդ կետի խախտմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող,

կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Տեխնոթերմ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն իրավաչափ չէ՝ որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.01.2022թ.-ի թիվ 26/26-1/21687-2021 գրությամբ «Տեխնոթերմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/04 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**